ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 348-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ)» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե)» կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝

ո ր ո շ ու մ   եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված պլանով նախատեսված միջոցառումների կատարումը և իրականացնել հսկողություն միջոցառումների կատարման նկատմամբ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-12-16 14:58:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

MARZPET OF THE REPUBLIC OF ARMENIA TAVUSH
МАРЗПЕТА ТАВУША РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
STAFF OF
07628257

Ք. Իջևան

16 դեկտեմբերի 2024թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզպետի
2024 թվականի դեկտեմբերի 16
թիվ 181 որոշման

# ՊԼԱՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | I. ՆԳՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | |
| | 1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն | | | | | |
| | 1.1 Շտաբային ուսումնավարժություն | | | | | |
| 1.1.1 | «ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին բնակավայրում սողանքի ակտիվացման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում» թեմայով | Օգոստոս | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Տավուշի ՄՓՎ, համայնքի արձագանքող ստորաբաժանումներ համայնքապետարան, կազմակերպություններ | |
| | 1.2 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն | | | | | |
| 1.2.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Տավուշի մարզում պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժությանը | Փետրվար, օգոստոս | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | Տավուշի մարզի ղեկավար կազմ, ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | Տավուշի մարզ | | | | | |
| | 2. Ընդհանուր պատրաստություն | | | | | |
| 2.1 | Մասնակցություն պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար- | Յուրաքանչյուր | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պարապմունքների անցկացմանը | կիսամյակ | | | |
| **3. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | |
| 3.1 | Գարնանային վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով՝ | Տարվա ընթացքում | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| | 1) ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 183-Ա 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 68-Ն որոշման 5-րդ կետի՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մինչև 14.02 | | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| 3.2 | Մասնակցություն Տավուշի մարզի տարածքում առաջացած բնական բնույթի վտանգների ու վտանգավոր երևույթների ուսումնասիրության իրականացմանը և դրանց սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին առաջարկությունների ներկայացմանը | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| 3.3 | Մասնակցություն ՀՀ քարաթափումների, հեղեղումների կանխարգելմանն ուղղված որոշակի պարբերականությամբ մոնիտորինգ անցկացնելու, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և համապատասխան միջոցառումներ ներդնելու նպատակով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 12-ի N 577-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատանքներին | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| 3.4 | Մասնակցություն ՀՀ կառավարության 10.11.2011թ. N 1582-Ն որոշման համաձայն՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների տվյալների ամփոփմանն ու ՀՀ վարչապետի 10.04.2012թ. թիվ 325-Ա որոշմամբ ստեղծված հանրապետական հանձնաժողովի անդամների համաձայնեցման ներկայացմանը: | Յուրաքանչյուր ամսվա 28-ը՝ նախորդ ամսվա | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| **4. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | |
| 4.1 | Մասնակցություն ՓԾ-ին կցագրված անձնակազմի և տեխնիկայի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտում | Տարվա ընթացքում | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| 4.2 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ ՔՊ | Տարվա | Տավուշի | ՄՓՎ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ, Պաշտպանության նախարարությանը չկցագրված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը | ընթացքում | մարզպետ, ՄՓՎ պետ | ստորաբաժանումներ | |
| **5. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | |
| 5.1 | Ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 6-Ն և Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 156-Ն «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ի համատեղ հրամանի պահանջների կատարում | 31.03 | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| 5.2 | Մասնակցություն ՀՀ Տավուշի մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը | Տարվա ընթացքում | Տավուշի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| | 1) Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| | 2) Ավստրիական և Հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում առաջին արձագանքման կամավորական ծառայության ինստիտուցիոնալիզացում» (VOLFIRE) ծրագրի շրջանակներում նոր կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| **6. INSARAG թիմերի պատրաստականության աստիճանի ապահովման ուղղությամբ** | | | | | |
| 6.1 | Մասնակցություն «Երկրաշարժի դեպքում որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը» թեմայով դաշտային վարժանքի անցկացմանը | Սեպտեմբեր | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| 6.2 | Մասնակցություն Քաղաքային որոնողափրկարարական թիմերի անդամների հետ դասընթացների անցկացմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **7. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | |
| 7.1 | Մասնակցություն ՓԾ 2024թ. կատարված աշխատանքների կատարման մասին հաշվետվության մշակմանը | Մինչև 21.01 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7.2 | Մասնակցություն Սենդայի աղետների ռիսկի նվազեցման գործողությունների ծրագրի շրջանակներում աղետների ռիսկի կառավարման ոլորտում ՓԾ-ի կողմից իրականացվող աշխատանքներին | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 7.3 | Մասնակցություն Աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման և ներդրման ուղղությամբ մեթոդական աջակցության ցուցաբերմանը | | | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 7.4 | Մասնակցություն ՓԾ տնօրենի 09.06.2022թ. Ն/11.4.3/28347-2022 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 02.06.2022թ. N 803-Լ որոշմամբ հաստատված ՄԱԿ Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024թթ. գործողությունների ազգային երկրորդ ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի համապատասխան կետերով սահմանված ՓԾ կողմից միջոցառումների իրականացման ապահովմանը | Տարվա ընթացում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 7.5 | Մասնակցություն ՆԳ նախարարի 2023 թվականի. դեկտեմբերի 4-ի «Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությամբ և ռազմավարության 2023-2026թթ. գործողությունների ծրագրով նախատեսված արդյունքային ցուցանիշների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, գնահատման կարգը և միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ պատասխանատու կատարող մարմինների կողմից ներկայացվող կիսամյակային և տարեկան հաշվետվությունների ձևաչափը հաստատելու մասին» N 1284-Ա հրամանով հաստատված միջոցառումների կատարմանը | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

**II. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

**8.1 Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8.1.1 | «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը անտառային հրդեհների ժամանակ» | 27.11 | ՄՓՎ պետ, Տավուշի մարզպետ | Տավուշի ՄՓՎ | Տավուշի մարզպետարան, «Սևքարի» անտառտնտեսություն, Էկոպարեկային ծառայություն, Իջևան | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | համայնք | |
| **8.2 Շտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 8.2.1 | «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը երկրաշարժի դեպքում» | 29.05 | ՄՓՎ պետ, Տավուշի մարզպետ | Տավուշի ՄՓՎ | Տավուշի մարզպետարան, մարզային ծառայություններ, Իջևան համայնք | |
| 8.2.2 | «ՀՀ ՆԳՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ անձնակազմի գործողությունները Տավուշի մարզում սողանքի դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 10.04 | ՄՓՎ պետ | ՄՓՎ Տավուշի | ՄՓՎ սպայական անձնակազմ | |
| 8.2.3 | «ՀՀ ՆԳՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ անձնակազմի գործողությունները Տավուշի մարզում երկրաշարժի դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում | 10.10 | ՄՓՎ պետ | ՄՓՎ Տավուշի | ՄՓՎ սպայական անձնակազմ | |
| 8.2.4 | Մասնակցություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը խոշոր անտառային հրդեհների դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացմանը | 18.04 | ՄՓՎ պետ, Նոյեմբերյան համայնքի ղեկավար | Նոյեմբերյան համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 8.2.5 | Մասնակցություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքների ակտիվացման դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացմանը | 10.06 | ՄՓՎ պետ, Դիլիջան համայնքի ղեկավար | Դիլիջան համայնքի ղեկավար կազմ | | |
| 8.2.6 | Մասնակցություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը համաճարակների առաջացման դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացմանը | 09.07 | ՄՓՎ պետ, Բերդ համայնքի ղեկավար | Բերդ համայնքի ղեկավար կազմ | | |
| 8.2.7 | Մասնակցություն «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով ՇՈՒ-ի անցկացմանը | 12.08 | ՄՓՎ պետ, Իջևան համայնքի ղեկավար | Իջևան համայնքի ղեկավար կազմ | | |
| **8.2 Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 8.2.1 | «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը փլուզված շենքերում» թեմայով ցուցադրական ՀՏՈՒ-ի անցկացում | 20.06 | ՄՓՎ պետ | ՓԾ տարածքային ստորաբաժա-նումներ | N62 ՀՓՋ, ՀՀ ոստիկանություն, «Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ Տավուշի ԳԳՄ, «ՀԷՑ» ՓԲԸ Իջևանի մասնաճյուղ, | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **8.3 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 8.3.1 | Մասնակցություն «Էներգետիկ ցանցում վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը | 18.07 | ՄՓՎ պետ, «ՀԷՑ» ՓԲԸ Աղստև մասնաճյուղի տնօրեն | «ՀԷՑ» ՓԲԸ Աղստև մասնաճյուղի ղեկավար կազմ | «ՀԷՑ» ՓԲԸ Աղստև մասնաճյուղի կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 8.3.2 | Մասնակցություն «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը խոշոր անտառային հրդեհների դեպքում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը | 08.08 | ՄՓՎ պետ, Իջևանի անտառտնտեսություն | «Հայանտառ» ՊՈԱԿ Իջևանի անտառտնտեսություն | Իջևանի անտառտնտեսության կազմ | |
| 8.3.3 | Մասնակցություն «Գազատար ցանցում պայթյունի հետևանքով վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացմանը | 24.10 | ՄՓՎ պետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ տնօրեն | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ Իջևանի տեղամասի ղեկավար կազմ | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ Իջևանի տեղամասի կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 8.3.4 | ՀՀ Տավուշի մարզի կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | 1) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 19.03 | ՄՓՎ պետ | Իջևանի ՀՓՋ | Գետահովիտի միջնակարգ դպրոց | |
| | 2) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը մշակութային հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 17.06 | ՄՓՎ պետ | Իջևանի ՀՓՋ | Իջևանի մշակույթի տուն | |
| | 3) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը առևտրային օբյեկտում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 19.09 | ՄՓՎ պետ | Իջևանի ՀՓՋ | Իջևանի «Դավիթ» սուպերմարկետ | |
| | 4) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 10.12 | ՄՓՎ պետ | Իջևանի ՀՓՋ | Գանձաքարի միջնակարգ դպրոց | |
| 8.3.5 | 1) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 11.02 | ՄՓՎ պետ | Դիլիջանի ՀՓՋ | Դիլիջանի թիվ 2 դպրոց | 4-րդ դասակ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը առևտրային օբյեկտում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 27.06 | ՄՓՎ պետ | Դիլիջանի ՀՓՋ | Դիլիջանի «Իննա» մարկետ | 1-ին դասակ |
| | 3) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 07.10 | ՄՓՎ պետ | Դիլիջանի ՀՓՋ | Հաղարծնի դպրոց | 2-րդ դասակ |
| | 4) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը հանգստյան օբյեկտում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 08.12 | ՄՓՎ պետ | Դիլիջանի ՀՓՋ | «Բեսթ Վեստերն Փլաս Փարադայս Հոթել Դիլիջան» հյուրանոցային համալիր | 3-րդ դասակ |
| 8.3.6 | 1)«Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 20.02 | ՄՓՎ պետ | Նոյեմբերյանի ՀՓՋ | «Ռաչիկ Պետոյան» բենզալցակայան | |
| | 2)«Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 14.04 | ՄՓՎ պետ | Նոյեմբերյանի ՀՓՋ | Լճկաձորի դպրոց | |
| | 3) «Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը արտադրական օբյեկտում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 10.09 | ՄՓՎ պետ | Նոյեմբերյանի ՀՓՋ | «Խոր արմատ» ՍՊԸ | |
| | 4)«Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 21.10 | ՄՓՎ պետ | Նոյեմբերյանի ՀՓՋ | «Տրանսօիլ» ԱԳԼՃԿ | |
| 8.3.7 | 1)«Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը արտադրական օբյեկտում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 20.03 | ՄՓՎ պետ | Տաուշի ՀՓՋ | Չորաթանի ձեռնոցի գործարան | |
| | 2)«Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը նախադպրոցական հաստատությունում » թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 19.06 | ՄՓՎ պետ | Տաուշի ՀՓՋ | Բերդի թիվ 2 մանկապարտեզ | |
| | 3)«Հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 24.09 | ՄՓՎ պետ | Տաուշի ՀՓՋ | Բերդի պետական բազմագործառութային քոլեջ | |
| | 4)«Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 02.12 | ՄՓՎ պետ | Տաուշի ՀՓՋ | «ԱԹՈ-ՑԼԻԿ» ԱԳԼՃԿ | |
| 8.3.8 | Շչակների գործարկմամբ «Ազդարարում, տարահանում, | Տարվա | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա- | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պատսպարում» թեմայով գործնական պարապմունքների անցկացում | ընթացքում | | բաժանումներ | | |
| 8.3.9 | ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | 01-06.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան կազմակերպություններ | |
| | «ՔՊ միջոցառումների իրականացումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում» թեմայով ՀՏՈՒ-ի անցկացում | 03.03 | ՄՓՎ պետ | Թիվ 62 ՀՓՋ | Լուսաձորի հիմնական դպրոց | |
| | | 03.03 | ՄՓՎ պետ | Թիվ 63 ՀՓՋ | Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ | |
| | | 03.03 | ՄՓՎ պետ | Թիվ 64 ՀՓՋ | Նոյեմբերյանի թիվ 1 մանկապարտեզ | |
| | | 03.03 | ՄՓՎ պետ | Թիվ 65 ՀՓՋ | Չինարիի դպրոց | |
| 8.3.10 | «Աղետներին դիմակայունության օր» խորագրով համապետական միջոցառումների անցկացում | 06-11.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան կազմակերպություններ | |
| 8.3.11 | Փրկարարի օրվա կապակցությամբ, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների, դասախոսությունների, սեմինարների անցկացում | 02-05.09 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **8.4 Օբյեկտային վարժանք** | | | | | | |
| 8.4.1 | Մասնակցություն «Խաղաղից ռազմական դրության անցման դեպքում ՔՊ միջոցառումների իրականացումը» թեմայով ՕՎ-ի անցկացմանը | 15.08 | ՄՓՎ պետ, Իջևանի ԲԿ տնօրեն | Իջևանի ԲԿ ղեկավար կազմ | Իջևանի ԲԿ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **8.5 Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 8.5.1 | ՀՀ Տավուշի մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՔՊ ծառայությունների շտաբի պետեր | |
| 8.5.2 | Հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման ծրագրի ներկայացում ՔՊՎ | Մինչև 27.01 | | | | |
| 8.5.3 | 1) Բնակչության ազդարարման կարգը<br>2) ՔՊ ազդանշանները | 13.03 | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 3)Բնակչության վարվելակերպի կանոնները ՔՊ ազդանշանների դեպքում | | | | |
| 8.5.4 | 1) Բնակչության պատսպարման կարգը<br>2) ՔՊ կառույցների տեսակները, դերը և նշանակությունը<br>3) ՀՀ Տավուշի մարզի ՔՊ համակարգը | 19.06 | | | |
| 8.5.5 | 1) ՔՊ միջոցառումները<br>2) ՔՊ նախապատրաստական միջոցառումներ<br>3) ՔՊ հիմնական միջոցառումներ | 07.08 | | | |
| 8.5.6 | 1) ՔՊ ծառայությունների պլանների կազմելու, համաձայնեցնելու և հաստատելու կարգը<br>2) ՔՊ պահեստային կառավարման կետերի ծավալումը<br>3) Բնակչությանը ԱՊՄ–ով ապահովումը | 13.11 | | | |
| 8.5.7 | Տավուշի մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման վերաբերյալ զեկույցի ներկայացում ՔՊՎ | 28.03<br>27.06<br>26.09<br>19.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| 8.5.8 | ՓԾ տարածքային ստորաբաժանումներում ԱԻ-ներում բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ դասընթացների անցկացում | Մարտ-Ապրիլ | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **8.6 Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | |
| 8.6.1 | ՀՀ Տավուշի մարզի տարածքում գարնանային վարարումների ժամանակահատվածում գետերի հոսքերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրություն և հավաքագրում, Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կանխատեսումների հիման վրա հրատապ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մարտ-հունիս | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| **8.7 Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | |
| 8.7.1 | Ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացման ընթացքի վերաբերյալ զեկույցի ներկայացում | 16.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| 8.7.2 | Տավուշի մարզի բազմաբնակարան շենքերի, մասնավոր տների, | Մինչև | | ՄՓՎ ստորա- | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպությունների նկուղային հարկերի վիճակի ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | յուրաքանչյուր ամսվա 10-ը | | բաժանումներ | | |
| 8.7.3 | Մասնակցություն զորահավաքային նախապատրաստության հարցերով ՆԳՆ ՓԾ տարածքային ստորաբաժանումներին մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **8.8 Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 8.8.1 | ՆԳՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ստորաբաժանումների ծառայողների և ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի համակարգում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | 1) ՀՀ մարզերում և Երևան քաղաքում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև մարզային առաջնությունների կազմակերպում և անցկացում | Ապրիլ | | | | |
| | 2) Պատանի հրշեջ-փրկարարական թիմերի հանրապետական առաջնության անցկացում | Մայիս | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| | 3) Պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման և ուսուցման կազմակերպման վերաբերյալ զեկույցի ներկայացում | 13.12 | | | | |
| 8.8.2 | ՀՀ Տավուշի մարզում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև առաջնությունների կազմակերպում և անցկացում | Ապրիլ | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.8.3 | ՓԾ տնօրենի 21.08.2020թ. Ն/11.3.1/37130-2020 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով սպասարկման տարածքներում նոր հիդրանտների տեղադրման, վնասված և ասֆալտապատման հետևանքով գետնի տակ մնացած հրշեջ հիդրանտների վերանորոգման, իրենց ձևով և տրամագծով հրշեջ ավտոմեքենաների մարտավարատեխնիկական տվյալներին չհամապատասխանող հիդրանտները գործածելի դարձնելու և գյուղական բնակավայրերում ջրավազանների կառուցման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | 04.04<br>04.07<br>03.10<br>26.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| 8.8.4 | ՓԾ տնօրենի 09.12..2021թ. Ն/11.1.3/63770-2021 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ-ում առկա աղբավայրերում հակահրդեհային միջոցառումների իրականացում և | Մինչև 23.05 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տեղեկատվության ներկայացում | | | | | |
| **8.9 Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 8.9.1 | ՆԳՆ գլխավոր քարտուղարի 2023 թվականի մայիսի 10-ի. թիվ Շ/1363-23 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, հանրագրերի, տեղեկատվության հարցումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.9.2 | ՆԳՆ ՓԾ տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալի 2023 թվականի մարտի 23-ի N Շ/866-23 շրջաբերականի կատարումն ապահովելու նպատակով ՓԾ ստորաբաժանումների կողմից անցկացվող ուսումնավարժությունների, վարժանքների, գործնական պարապմունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր հինգշաբթի | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.9.3 | ՆԳՆ 2024 թվականի փետրվարի 2-ի. N Շ/415-24 շրջաբերականի կատարումն ապահովելու նպատակով կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվության ներկայացում | 03.01<br>01.04<br>01.07<br>01.10 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.9.4 | ՓԾ տնօրենի 2022 թվականի դեկտեմբերի 06-ի N Ն//11⊡4⊡3/59196-2022 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով իրականացված գործուղումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր ամսվա 5-ը | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.9.5 | ՓԾ տնօրենի 2021 թվականի փետրվարի 5-ի թիվ Ն/11.3.1/5502-2021 Արտակարգ իրավիճակների նախարարու-թյանը Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կողմից Փրկարար ծառայության ստորաբաժանում-ներին տրամադրված ավտոմեքենաների ելքերի և գույք-սարքավորումների վերաբերյալ նախորդ ամսվա տեղեկատվության ներկայացում | Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ աշխատանքա-յին օրը | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.9.6 | Պետական աջակցության փաստացի գործող ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների մասին հաշվետվության ներկայացում | 07.01<br>03.04<br>03.07<br>03.10 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |
| 8.9.7 | ՀՀ ՆԳՆ ՓԾ 2023 թվականի սեպտեմբերի 28-ի Շ/2726-23 շրջաբերականի կատարումն ապահովելու նպատակով միջազգային | 28.03<br>30.06 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գործունեության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվության ներկայացում | 29.09<br>29.12 | | | | |
| 8.9.8 | ՀՀ Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանի մշակում | Մինչև 24.11 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| 8.9.9 | ՓԾ տնօրենի 29.08.2022թ. Ն/11.1.1/42919-2022 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով մեթոդական աջակցություն բարձր ռիսկայնության օբյեկտներին աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման գործում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| 8.9.10 | Համայնքների և կազմակերպությունների ՔՊ պլանների ու պլան-ժամանակացույցերի ճշգրտում | Մինչև<br>11.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| 8.9.11 | ՀՀ Տավուշի մարզի ՔՊ պլանների ճշգրտում | Մինչև<br>20.06 | | | | |
| 8.9.12 | «ՀՀ Տավուշի մարզի բնակչության տարհանման պլան»-ի ճշգրտում | Մինչև<br>29.08 | | | | |
| 8.9.13 | Արտակարգ իրավիճակներում գործելու (աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու) պլանների ճշգրտում | Տարվա ընթացքում | | | | |
| 8.9.14 | ՆԳՆ ՓԾ տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի 08.04.2024թ. Ճ/1087-24 հանձնարարականի պահանջի համաձայն՝ ՓԾ տարածքային ստորաբաժանումների կողմից տեղեկատվության ներկայացում ՓԾ | 07.01<br>04.07 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորա-բաժանումներ | | |
| **8.10 Զորահավաքային պատրաստություն** | | | | | | |
| 8.10.1 | Զորահավաքային պատրաստության միջոցառումներ | Առանձին պլան-ժամանակացույցով | ՄՓՎ պետ | ՄՓՎ պետի տեղակալ | Համապատասխան զինկոմիսարիատներ | |

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ